ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033,ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

№ Ե/39/831-25

«13» 11 2025թ.

«ԱՅԳ ՎԱՅՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
/հասցե՝ Հայաստան, ԱՐԱՐԱՏ, ԱՅԳԵՔԱՐԴ, ԳԱՅԻ Փ. Տ 33;
էլ. հասցե՝ aygvaynllc@mail.ru /

Հարգելի՛ պարոն Մարգարյան,

Տեղեկացնում ենք, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «ԱՅԳ ՎԱՅՆ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի ապրիլի 28-ին կնքված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում հատկացվել են ֆինանսական միջոցներ՝ 1-5-րդ չափաբաժինների մասով և Երևանի քաղաքապետարանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 15-ին ծանուցվել է համաձայնագիր, սակայն սահմանված ժամկետում՝ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 6-ը ներառյալ, չի ներկայացվել մասնակցի կողմից հաստատված համաձայնագրի տարբերակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 2025 թվականի նոյեմբերի 13-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՅԳ ՎԱՅՆ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելիս սահմանված կարգով ներկայացվել են որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծման արդյունքում՝ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պետք է ապահովվի որակավորման ապահովման մասով՝ 329,788.07 (երեք հարյուր քսանինը հազար յոթ հարյուր ութսունութ ամբողջ յոթ հարյուրերորդական) ՀՀ դրամի չափով, պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 219,858.71 (երկու հարյուր տասնինը հազար ութ հարյուր հիսունութ ամբողջ յոթանասուն մեկ) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 1570083324940100 հաշվեհամարին:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ին:

Խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում՝

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն այդ հանգամանքի վերաբերյալ տեղեկատվությունը, համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատարող՝ Վ. Էլոյան

Հեռ. +374 98389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)